

396147

Ա-65

87

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ
ՄԻԱՅԵՔ !



ԸՆԿԵՐ ԼԵՆԻՆ !
ՄԵՆՔ ՀԻՇՈՒՄԵՆՔ
ՔՈ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ



119 FEB 2013

3 (97)

2-65

0 12 0 - 10

№ 1

ԲԱՆՎՈՐՈՒՅՈՒ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՅՈՒ
ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1

300

Պրոբսարգեր բոլոր լեզուներով, միացիկ

693-ՀՈ



ԱԶԽԱՏԱՎՈՐՈՒՅԻ,

ԳՆԱ.

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ
Ժ Ո Ղ Ո Վ

Հ. Ա. Գ. Գ. Զ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1924 թ

005
02-8081

ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՂԻՆ

Նայեմբերյան հեղափոխությունը
 Վիշրեյ Հայաստանի բանվորուն հ և գեղջ-
 կուն հ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ստոր-
 կությունը: Անցյալի մոլթ ու բուլթ ու-
 ժերին անհրաժեշտ է միայն հասցնել
 լրացուցիչ հարվածներ կնոջ ստրկության
 ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՅԵՎ ՀՈԳԵՎՈՐ հետքերը սրբելու
 համար, ճանապարհ հարթել կանաչի
 մատաղյի ՆՈՐ ԿԵՆՑԱՂԻ ՅԵՎ ՆՈՐ ԳԻՏԱԿՑՈՒ-
 ԹՅԱՆ առաջ:

Այդ կենցաղն ու այդ գիտակցություն-
 նը Հայաստանի բանվորուն հ և գեղջ-
 կուն հ և պիտի նվաճի ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՆ-

ԸՆԴՀԱՏ ՊԱՅՔԱՐԻ միջոցով: Պայքար, վորի նպատակն է ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ-ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՄՈՒՆԻՋՍԻ ՎԵՐՋՆԱ-ԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ:

Կուտակցության գլխավոր հոգսերից մեկն է ՄԱՍՆԱԿԻՑ ԱՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՑԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ կոմունիզմի կազմակերպչական այդ աշխատանքին:

Հայաստանի բանվորունու և գեղջ-կունու առջև լայն բացված է տնտեսական, խորհրդային, արհեստակցական և կուտակցական աշխատանքի մեր դռները: Լայն մասսայական այդ աշխատակցու-թյան համար Հայաստանի աշխատավո-րունին ունի արդեն պետք չեղած ԻՐԱ-ՎՈՒՆՔԸ: Այդ իրավունքը կառույցողական մեր աշխատանքների մեջ բանվորունու և գեղջկունու ունենալիք մասնակցության ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ե միաժամանակ:

Դասակարգային իրավունքի ողորդ-վորժման և հեղափոխական այդ պար-

տականության կառարումի համար է, վոր անհրաժեշտ է հիմա ԲԱՐՁՐԱՑՆԵԼ աշ-խատավոր կնոջ ՀԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒ-ԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ, ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐ ԿԱՄՔԸ, ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԻՍՑԻՊԼԻՆԸ և վոր ամենակարևորն է՝ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՅԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ հնարավորություն ստեղծել ԳՈՐԾՈՆ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ համար:

Անուշ Զոհաբաբյան

Կ Ո Չ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐՈՒՇԻՆՆԵՐԻՆ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՇԻՆՆԵՐԻՆ

Առաջիկա հոկտեմբեր ամսին տեղի յե ունենալու քաղաքներում ու գյուղերում պատգամավորական ժողովների վերընտրություններ: Ամեն մի բանվորունի, ամեն մի գեղջիկունի պիտի մասնակցի այդ վերընտրություններին և պիտի ընտրի յուր միջից գիտակից, անկուէն, հասկացող պատգամավորունի:

Պատգամավորական ժողովները մեր կյանքի մեջ նոր են առաջ յեկել. նրանք ունեն միայն մի տարվա փորձ և չեն կարողացել անել այն, ինչ վոր արել են նրանք Ռուսաստանում: Ռուսաստանում արդեն 7 տարի յե աշխատում են պատգամավորական ժողովները և այս ժամանակվա ընթացքում պատրաստել են մի շարք գիտակից բանվորունիներ և գեղջիկներ, վորոնք նվիրված

աշխատում են գանազան խորհրդային և պրոֆեսիոնալ հիմնարկություններում, ինչպես գյուղ-խորհուրդներում, կոոպերացիաներում, փոխող-կամներում և այլն:

Այստեղ նրանք բանվորի և գյուղացու հետ միասին առաջ են տանում յերկրի շինարարական գործը և հիմք են դնում նոր կյանքի: Իսկ դու Հայաստանի աշխատավորունի, շատ հետ ես մնացել այդ բոլորից, դուքեր շարունակ յեղել ես փակված քո տան չորս պատերի մեջ, դուք աշխարհը քեզ համար յեղել ես օտար, քո միակ գործը յեղել ե քո յերեխաների ու տան հոգսը, դու յեղել ես սարուկ քո ոջախին, տաշտին ու կճուճին: Յերկրի իշխանները ու նրանց բարեկամները հաճառացրել են, վոր քո յակերը կարճ ե, ամեն բանի չի հասնի, վոր դու նույնիսկ մարդ չես, այլ մարդու նման մի արարած: Սրա համար և, վոր յերբեք քո խոսքը, քո կարծիքը չեն հարցրել, յերբ հիմնել են այս կամ այն որենքը, հայտարարել են այս կամ այն պատերազմը, վորոնցից ամենից շատ տանջվել ու չարչարվել ես դու: Դու դեռ չես մոռացել այն արյունոտ սե որերը, այն յեղբայրասպան պատերազմները, թագավորի ու դաշնակցականների որով: Այս բոլորին դու պատասխանել ես միայն լացով ու կոծով, քեզ համոզել են ու միտկարել, վոր այդպես և աշխարհի որենքը, այդպես և յեղել և այդպես ել պիտի լինի:

Քորհրդային իշխանութիւնը վերջ դրեց այս բոլորին, փոխադրեց աշխարհի այդ որեւքները, ազատագրեց ճնշվածներին ու հարստահարվածներին և առաջին հերթին քեզ, աշխատավորուհի, իբրեւ ճնշվածներից ճնշված, ստրուկներից ստրուկ։ Քորհրդային իշխանութիւնը քեզ դուրս քաշեց քո փակված չորս պատերից. գցեց քեզ հասարակական կյանքի լայն ճանապարհին և հայտարարեց, վոր դու այլևս ստրուկ չես, դու աշխատավորական մեծ ընտանիքի հովասար անդամ ես, դու ունես այն բոլոր իրավունքները, ինչ վոր քո ընկեր բանվորը ու գյուղացին։ Նրա հետ միասին դու պիտի կռվես բանվորա-գյուղացիական իշխանութեան թշնամիների դեմ, նրա հետ միասին պիտի շինես քո նոր կյանքը, այնպես, ինչպես դու ուզում ես։

Մեր մեծ ուսուցիչ ընկ. Լենինն ասում է, վոր նոր կյանքը, կամ կոմունիզմը վերելից մի հրամանով կամ դեկրետով չպիտի գա։ Այդ նոր կյանքը պիտի շինեն իրանք բանվորները ու գյուղացիները իրենց ձեռքով։ Այդ կլինի այն ժամանակ, ավերացնում ե Լենինը, յերբ ամեն մի բանվոր, բանվորուհի, ամեն գյուղացի, գեղջ-կուհի, իբր գործը լավ կիմանա, լավ կհասկանա։

Չին կյանքի մեջ ամեն մեկը մտածում եր իբր մասին, նոր կյանքը վոր շինվում ե աշխատավորութեան ձեռքով, բոլորի համար ե։

Ուրեմն դու քո հոգսը պիտի դարձնես վոչ միայն քո յերեկոսները, քո տունը, այլ ամբողջ քո քաղաքի, կամ գյուղի յերեկոսները, նրանց կրթութիւնը, ամբողջ բնակչութեան առողջապահութեանն ու անասութիւնը։

Դու պիտի գիտենաս, վոր ամեն մի մարդ ամեն մի դպրոց, հասարակական ճաշարան, լվացարան, կոտլերատիվ, փուռ, հիվանդանոց, փուրնք պիտի կազմակերպես քո ձեռքով, այն հիմնարկութիւններն յեն, վոր քեզ պիտի ազատեն քո տաշտից ու կճուճից, քո դարավոր ստրկութիւնից։ Միևնույն ժամանակ սրանք այն հիմնաքարերն են, վորոնցից պիտի շինես քո նոր կյանքը։ Այս բոլորը հասկանալու համար, քո նոր պարտականութիւններդ կատարելու համար, դու շատ բան ունիս սովորելու։

Կոմունիստական կուսակցութիւնը բանվորուհու և գեղջկուհու բաժնի (կամ ինչպես տաժ ասում են կին բաժնի) միջոցով բաց ե արել քեզ համար—առաջին կոմունիզմի դպրոցը—վորն ե պատգամավորական ժողովը։

Շտապիր, Հայաստանի աշխատավորուհի, մասնակցիր պատգամավորական ժողովին, ընտրիր և ընտրվիր։ Այստեղ ե վոր դու պիտի սովորես, թե ինչ բան ե նոր կյանքը—կոմունիզմը, ինչու դու պիտի շինես քո ձեռքով այդ նոր կյանքը, և ինչպես պիտի շինես, ո՞վ ե քո

ԹՀնամին և ԽՆՀ և նրանց ուղածը ու շատ ու շատ այսպիսի բաներ, վոր հարկավոր և քեզ գիտե-
նալ: Կանոնավոր հաճախիր քո դպրոցդ, այսինքն
պատգամավորական ժողովները, ուշադիր լսիր
և գիտեցածդ ու լսածդ պատմիր քո ընկերուհի-
ներին, վորոնք քեզ ընտրել և ուղարկել են պատ-
գամավորական ժողով:

Անցնելով միայն պատգամավորական ժո-
ղովներից, անցնելով միայն այս կոմունիզմի
դպրոցով, դու կդառնաս գիտակից, հաս-
կացող անգամ աշխատավորական ընտանի-
քի: Առանց կնոջ մասնակցութեան յերբեք չի
լինի նոր կյանք, չի լինի սոցիալիզմ, ասում և
ընկ. Լենինը: Վորքան շուտ դու միանաս յերկրի
շինարարական աշխատանքին, այնքան շուտ կը
կառուցվի այն զեղեցիկ հոյակապ շենքը, վորի
անունն և կոմունիզմ:

Կեցցե՛ գիտակից բանվորուհին ու զեղջկու-
հին.

Կեցցե՛ պատգամավորական ժողովը.

Կեցցե՛ կոմունիզմը:

Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան
հետտրոնական Կոմիտեյի կից բանվորուհու յեւ զեղջ-
կուհու բաժնի վարիչ՝

ՔԼՈՐՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԻՆՉ ԱՍՍՑ ԸՆԿ. ԼԵՆԻՆԸ

Բանվորուհիներ և զեղջկուհիներ, պատգա-
մավորական ժողովների վերընտրութեան որերին՝
ամենից առաջ մեր միտքն և ընկնում ընկ. Լե-
նինը՝ մեզ կազմակերպողը և վեգեորողը: Ընկ.
Լենինը այն առաջին և մեծ հեղափոխականն էր,
վորը կարեց աշխատավոր կնոջ աղատությունը
կաշկանդող շղթաները:

Հեղափոխութեան հենց առաջին որերին
ընկ. Լենինը ասում էր—բուշեմիլիզմի, Հոկտեմ-
բերյան հեղափոխութեան նպատակը այն պետք և
լինի, վոր առաջ քաշի, ազատագրի նենց նրանց,
ովքեր կապիտալիստների, բուրժուաների որով
ավելի շատ են տանջվել, իսկ այդ տանջ-
վածների, մի մասը յեղել և աշխատավոր
կինը, վորը ամենից շատ և ճնշվել,
քաշ յեկել: Բուրժուական, կապիտալիստական
պետութեանների որով բանվորուհին և զեղջկու-
հին նախ իրավագուրկ էր, վորովհետև որենքը
նրան աղամարդու հետ հավասար իրավունք չէր
տալիս և հետո նա ինչպես ընկ. Լե-
նինն և ասում տնային ճորտութեան մեջ էր:

ձնշված, տրորված լինելով մանր, սև, ծանր, մարդու ուղեղը բխացնող խոհանոցի աշխատանքներով, առանձնացած իր տնային տնտեսություն մեջ՝ աշխատավոր կլինը բոլորովին մոռացված և արհամարված եր հասարակության կողմից: Ընկ. Լենինը ասում է՝ խորհրդային իշխանությունը արմատից կտրեց այն անհավասարությունը, վոր կար տղամարդու և կնոջ մեջ, մանավանդ այն ստոր անհավասարությունը, վոր գոյություն ունեւր ընտանիքի, ամուսնություն և յերեխայի վերաբերմամբ: Խորհրդային իշխանությունը առաջինն եր, վոր աշխատավոր կնոջ լիակատար հավասարություն տվավ պետության, ընտանիքի և համարակության մեջ: Մեք բանավորուհին և գեղջկուհին այսօր խորհրդային իշխանության ազատ և հավասար քաղաքացիներն են:

Ապա ընկ. Լենինը աչքի առաջ եր առնում այն հանգամանքը, վոր աշխատավոր կլինը կարող և և պետք և մեծ ունություն ցույց տա խորհրդային իշխանության շինարարական գործին: Ընկ. Լենինը լավ եր ասում, վոր խորհրդային իշխանության գործը մինչև վերջը կտանենք մենակ են ժամանակ՝ յերը միլլիոնավոր յեվ միլլիոնավոր բանվորուհիներ յեվ գեղջկուհիներ կմտանակցեն խորհրդային շինարարության գործին, իսկ բանվորուհին և գեղջկուհին վորպեսզի կա-

րողանան մասնակցեն խորհրդային յերկրի աշխատանքներին, պետք և սովորեն այդ աշխատանքները կատարել: Ամենից առաջ նրանք պետք և զրադիաություն սովորեն: Իլլիշը մեզ ասել և, վոր մեր մեծ թշնամին անգրագիտությունն և: Ապա բանվորուհին, գեղջկուհին պետք և խորհրդային իշխանության բացած դպրոցները գնան, իրենց կուլտուրական աստիճանը բարձրացնեն, ծանոթանան մեր յերկրի որենքներին հետ, մասնակցեն քաղխմբակների սլարապմունքներին, մի խոսքով այնքան պետք և սովորեն, վոր կարողանան իրենց իշխանությունը կառավարել: Ընկ. Լենինը մեզ շատ և ասել, ասցին՝ մենք պետք և սովորենք, յերկրորդ՝ սովորենք, յերրորդ՝ սովորենք:

Բանվորուհին և գեղջկուհին տղամարդու հետ հավասար քաղաքական իրավունքներ ստանալով, իհարկե չե նշանակում, վոր աշխատավոր կլինը բոլորովին տղատագրված ե: Ընկ. Լենինը ասում եր՝ ամենագլխավոր ազատությունը այն և, վոր կնոջը կալատի տնային տնտեսությունից, խոհանոցի, որորոցի նոգսից. հարկավոր և բաց անել միտքներ, բանվորուհու յերեխային աշտեղ մեծացնելու համար, հասարակական փոեր, ճաշարաններ, մի խոսքով տնային առանձնացած տնտեսությունը դարձնել համայնական, վորից հետո աշխատավոր կլինը լիովին կազա-

տաղրվի: Իհարկե զժամը և տառնձին տնտես-
 սությունները միացնել, համայնական դարձնել:
 Բայց այս բոլորը կհաջողվի այն ժամանակ, յերբ
 ինքը բանվորուն, գեղջկուն, յևս մասնակից են
 այդ աշխատանքին: Աշխատավոր կնոջ ազատա-
 գրման գործը, իրենց բանվորունների գործն և,
 սակ և մեզ ընկ. Լենինը: Նա պետք և
 աջակցի բաց անելու մարդներ, լվացքատուն,
 ճաշարան և այլ հիմնարկներ և ազատագրելու ի-
 րեն տնային հոգսերից: Այս աշխատանքը մենք
 մի անգամից կատարել չենք կարող: Ընկ. Լե-
 նինը մեզ զգուշացրել և չհուսահատվել, վորովհե-
 տև սա մի քանի տարիների գործ և: Բայց և
 այնպես յերբ մենք նայում ենք մեր անցած
 ճանապարհին, տեսնում ենք, վոր բանվորուն,
 գեղջկուն իրենց ազատագրման համար մեծ
 աշխատանք են կատարել ընկ. Լենինի գեկավա-
 րությամբ, վորք մարտական կռիվ պայքարի յե-
 կանչել բանվոր գասակարգին, արթնացրել դա-
 րերով ճնշված բանվորունուն ու գեղջկունուն:
 Ահա թե ինչու այսօր մեր խոսքերը և մտքերը
 ուղղված են ընկ. Լենինին:

Հայաստանի բանվորուններ և գեղջկունի-
 ներ, մեր հանձարեղ և մեծ գեկավար ընկ. Լե-
 նինը այսօր մեզ հետ չե, անհրաժեշտ և սղմել
 մեր շարքերը, կազմակերպվել, վոր կարողանանք
 միացյալ ուժերով իրադրոժել ընկ. Լենինի պատ-
 դամները:

Լ.

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՇԻՆԵՐԻ ՎԵՐ- ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընկեր բանվորուններ և գեղջկուններ, շու-
 տով դուք ձեր միջից պատգամավորուններ
 պիտի բնարեք: Ի՞նչու համար եք ընտրում
 սրտապամավորուններին և սւմ պետք և ընտ-
 րեք:

ԿՈՄՈՆԻՏԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՅԻՆ

Կոմունիստներն ասում են, վոր մեր հեղա-
 վոխությունը, աշխատավորի իշխանու-
 թյունը կհաղթի այն ժամանակ, յերբ աշխատա-
 վորուն ել հասկանա նրա նշանակությունը,
 մասնակցի ու պաշտպանի նրան: Կոմունիստներն
 այսպիսով նայում են մեր բանվորուն և գեղջ-
 կունու վրա, վորպես խորհրդային իշխանության
 մի նոր բանակի, զորքի վրա, առանց վորի

խորհրդային իշխանութիւնը չի կարող հաղթել: Աշխատավորուն, վոր նոր նոր սկսում ե գարթնել քնից, պիտի դառնա բանվորի ու գյուղացու հետ միասին այն սյուններից մեկը, վորի վրա կանգնած ե մեր հեղափոխութիւնը, աշխատավորի իշխանութիւնը:

Այսպէս են նայում կոմունիստները աշխատավորուն վրա:

ԿԻՆ-ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Բայց մեր բանվորուն, մանավանդ մեր գեղջկուհին շատ հեռու յեն խորհրդային իշխանութիւն գործերին մասնակցելուց: Իրանց տնից, յերեխայից բացի ել ուրիշ բանով չեն հետաքրքրվում: Իրանց տան ե ընտանիքի գործերն ել լավ չեն անում: Ել չեն ասում, վոր նրանց հարցուրից ինտուն-ինը գրել—կարդալ չգիտե, աշխարից վոչ մի խաբարութիւն չունի: Կին-բաժինների, կամ ավելի ճիշտ բանվորուհիների ե գեղջկուհիների բաժինների աշխատանքը հենց նրանումն ե, վոր շուտ գարթեցնեն աշխատավոր կնոջը, նրանց մասնակից անեն մեր խորհրդային իշխանութիւն շինարարութիւնը, վոր մեր բանվորուն ե գեղջկուհին իսկապէս խորհրդային իշխանութիւն սյուններից մեկը դառնան:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Մեր բանվորունների ե գեղջկուհիների մեջ կան քիչ թե շատ աչքները բաց ու մեր իշխանութիւնը նվիրված կանայք: Կոմունիստական կուսակցութիւնն ասում ե, վոր մեր կին-բաժիններն իրանց աշխատանքն հենց այդ աշխարաց կանանցից պետք ե սկսեն: Նրանց ավելի հեշտ ե առաջ քաշել ե խորհրդային աշխատանքներին վարժեցնել: Հենց այդ աչքները բաց ու աշխարհից քիչ թե շատ բան հասկացող ու աշխատավորի իշխանութիւնը նվիրված կանանցից մեր բանվորուններն ու գեղջկուհիները պատգամավորուններ պետք ե ընտրեն: Կին-բաժիններն իրանց զլխավոր ուշադրութիւնը պետք ե դարձնեն այդ պատգամավորունների վրա: Պատգամավորունները շուտ-շուտ ժողովներ պիտի ունենալ: Այդ ժողովներում պատգամավորունները պիտի ծանոթանան այն բոլոր աշխատանքների հետ, վոր հիմա մեր բանվորն ու գյուղացին են կատարում մեր հեղափոխութիւն, մեր խորհրդային իշխանութիւն հաղթութիւն համար: Հիմա տեսնենք, թե պատգամավորական ժողովները ինչ են տալիս պատգամավորունուն կամ ինչ աշխատանքի են վարժեցնում:

1003
72535



ԱՇԽԱՏԱՎՈՐԸ ԻՆՔԸ ՊԵՏԲ Ե ԿԱՌԱՎԱՐԻ ԻՐ ՅԵՐԿԻՐԸ

Խորհրդային իշխանությունը աշխատավորի իշխանությունն է: Մեր յերկիրը հիմա բանվորն ու աշխատավոր գյուղացին են կառավարում: Մեր բանվորունին ու գեղջկունին ել աշխատավորներ են, խորհրդային իշխանությունը նրանցն ել է: Բայց նրանք մեր իշխանության գործերին կամ բոլորովին չեն մասնակցում կամ շատ քիչ են մասնակցում: Մեր քաղաքի և գյուղերի խորհուրդների և գործկոմիտեների մեջ թեպետ ընտրված կանայք կան, բայց նրանք խորհուրդներում կամ գործկոմներում քիչ են լինում, յեղած ժամանակն ել, լուռ նստում են, չեն խոսում, գյուղի, քաղաքի հոգսը չեն քաշում, յերկիրը չեն կառավարում:

Մեր պատգամավորունիները ամենից առաջ պետք է սովորեն յերկիրը կառավարելու գործը, պետք է ծանոթանան թե մեր գյուղը, մեր քաղաքը ինչ կարիք, ինչ հոգս ունեն, վոր յերբ ընտրվեն մեր խորհուրդների կամ գործկոմների մեջ, կենդանի գործ կատարեն, իսկապես յերկիրը կառավարեն:

Պատկամավորունիները պետք է աշխատեն մեր կոոպերատիվներում, հողային հանձնաժողովներում, գյուղացական խորհուրդներում և մասնակցեն գյուղի ու քաղաքի բոլոր գործերին:

Մեր կառավարությունը աշխատավորի կառավարությունն է: Աշխատավոր կանայք պետք է մասնակցեն նրա գործերին: Պատգամավորունիները ամենից առաջ ալ գլխի սովորեն:

ՊԵՏԲ Ե ԿԱՌԱՎԱՐՆԵՐԸ ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ

Մեր յերկիրը աղքատ է: Կոնիները մեղ աշխատակ ուր են գցել, վոր մեր բանվորն ու գյուղացին կուշտ հաց չեն կարողանում ուտել: Խորհրդային իշխանությունը հենց առաջին որից սկսել է յերկիրը հարստացնելու գործը:

Այս չորս տարում շատ բան է արված:

Ջրանցքներ են փորված, վոր մեր գյուղացին իր ցանքսը մեծացնի, ողուտ շատ ստանա: Սկսել ենք բամբակ ցանել, վոր մեր յերկրի գլխավոր հարստությունն է, ծառեր ենք տնկում, ճանապարհներ, կամուրջներ քցում:

Խորհրդային իշխանությունը վաղինչ չի խնայում մեր յերկիրը հարստացնելու համար: Քաղաքում, գյուղում մեր աշխատավորը իր հարազատ իշխանության հետ կպել է յերկիրը շենացնելու գործին: Այդ լավ, շինարար աշխատանքին մեր բանվորունիները, մանավանդ մեր գեղջկունիները ելի շատ քիչ են մասնակցում: Գեղջկունի պատգամավորունին պետք է սովորի իր տնտեսությունը աշխատեա տանել, վոր նրա ստացած արդյունքը շատ լինի: Նա պետք է իմանա կո-

Հի, փոշխարի, հավի պահելու յեղանակը, յեղի մածնի պատրաստելը: Նա պետք է լավ հիշի, փոր յերբ լավացնում է իր տնտեսությունը, գրանով նա հարստացնում է խորհրդային իշխանությունը և մասնակցի գյուղի բոլոր շինարար աշխատանքներին:

Բանվորուհի պատգամավորուհիները պետք է ծանոթանան մեր գործարաններին, արհեստանոցների գրությանը և աշխատանքների հետ, փոր ավելի յեռանդով աշխատեն:

Մենք մեր յերկիրը աղքատությունից կը հանենք այն ժամանակ, յերբ մեր բանվորուհին և գեղջկուհին ել լծակն այն մեծ շինարար աշխատանքին, փոր հլու մեզ մոտ կատարվում է:

ՄԵԶ ԼՈՒՅՍ Ե ՊԵՏԲ

«Անդրադիտությունը մեր մեծ թշնամին է» ասել է ընկ. Լենինը: Մենք գյուղեր ունենք, փորակող կանաչք բոլորը անդրադեռ են: Ել ինչպե՞ս կառավարեն յերկիրը, ել ինչպե՞ս լավացնեն իրանց տնտեսությունը: Մորհրդային իշխանությունը ասում է աշխատավոր կանանց. — հարուստների կառավարությունը չե՞ր ուզում, փոր դուք ուսում ունենաք, գիրք, լրագիր կարդաք, փոր ձեր աչքերը բացվեն: Աշխատավորի կառավարությունը ասում է՝ սովորեք, գրագետ դարձեք, փոր ճանաչեք խորհրդային որենքները,

սովորեք լավ կրթել, մեծացնել ձեր յերեխաներին և ձեր շրջապատի համար ոգտակար և լուսավոր մարդ դառնաք: Ամեն մի պատգամավորուհի պարտավոր է գրեղ-կարգալ սովորել: Բացի այդ, նա պետք է գնա տիումը, խրճիթը, ցեղեցարան, և լսի դասախոսություններ, սովորի, լուսավորի իր միտքը: Առանց գրան նա չի կարող փոշ մի աշխատանք կատարել:

ԴԵՊԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կուսակցության մեջ կանայք շատ քիչ են մասնում: Սա ցույց է տալիս ելի կնոջ հեռամնացությունը, նրա հասարակական կյանքից կտրված լինելը: Ընկ. Լենինի մահմանից հետո խորհրդային միության յերկրներում 200 հազար բանվոր են մտել կոմունիստական կուսակցության շարքերը: Սրանց մեջ ել բանվորուհիները չնչին մասն են կազմում:

Մեր կուսակցության 13-րդ համագումարը, փոր անդի ունեցավ այս տարի մայիսի վերջին, այս բանի վրա ուշադրություն դարձրեց: Համագումարը գտավ, փոր անհրաժեշտ է մեր գիտակից բանվորուհիներին ու գեղջկուհիներին մտցնել կուսակցության մեջ:

Կոմունիստական կուսակցության մեջ մրանում են նրանք, ովքեր նվիրում են իրանց կյանքը բանվորի, աշխատավորի առհասարակ

բարձր ճնշվածների և հալածվածների ազատութ-
ւան գործին:

Կան մեկը վոր մեր բանվորուհուց ու գեղ-
ջկուհուց ավելի կորած, փոքրատակ աված ու
հալածված լինի: Կամունիստական կուսակցու-
թյունը բոլոր ճնշվածների հետ ազատություն և
բերել նաև մեր աշխատավոր կնոջը: Մեր բան-
վորուհին ու գեղջկուհին պիտի մտնեն իրանց
ազատարար կուսակցության շարքերը, վոր, ա-
մուր պահեն իրանց ձեռքում իրանց ազատու-
թյունը: Բայց մեր աշխատավոր կինը գեռ պա-
տաստ չի մտնելու կոմունիստական կուսակցու-
թյան շարքերը: Պատգամավորական ժողովները
այն պարագան են, փորակող մեր աշխարհից բանվորու-
հիներն ու գեղջկուհիները պիտի պատրաստվեն
մտնելու կոմունիստական կուսակցությունը:
Այդ պատգամավորական ժողովներում մեր աշ-
խատավորուհին կհասկանա թե ինչ բան և կու-
սակցությունը և ինչու գիտակից աշխատավորու-
հին պետք է նրա մեջ լինի:

Ո՞ՒՄ ՊԵՏԳ Ե ԸՆՏԲԵԼ

Ընկ. բանվորուհիներ ու գեղջկուհիներ. հիմա
դուք նոր պատգամավորուհիներ եք բնորոշ:
Ո՞ւմ պիտի ընտրեք: Դուք արդեն խնայար, թե
պատգամավորուհիներն իրանց ժողովներում ինչ
պիտի սովորեն, ինչ աշխատանք պիտի տանեն:

Պարզ և, վոր պետք է ընտրեք ձեր միջից այն
բանվորուհիներին և աշխատավորուհիներին, ով-
քեր այդ աշխատանքը կարող են կատարել, ով-
քեր սրտանց կպած են խորհրդային ժշխանու-
թյանը: Նրանց, ովքեր աշխարհից են, սովորելու
սեր ունեն, ջանել են, յետանդ ունեն աշխատե-
լու: Պատգամավորուհիները փոշ միայն իրանք
պիտի սովորեն. նրանք իրանց սովորածը ձեզ
պիտի պատմեն, ձեզ պիտի սովորացնեն, վոր
ձեր աչքներն ել բացվի, դուք ել մեր այս նոր,
ազատ կյանքի համար ոգտակար մարդիկ դառ-
նաք: Կով հիշեցեք, վոր մեր հեղափոխությունը
կհաղթի այն ժամանակ, յերբ դուք ել լծվեք
նրա աշխատանքներին: Առանց ձեր մասնակցու-
թյանը, խորհրդային իշխանությունը չի կարող
վերաշինել մեր յերկիրը, բավայնել մեր կյանքը:
Կով մոռանեցեք և պատգամավորուհիներ
ընտրելիս, ընտրեք նրանց, ովքեր արժանի են
դրան:

Ն.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մեր աշխատանքի ուղին . . . Ս. Հովհաննիսյան
2. Կոչ Հայաստանի բանվորունեքին յեվ զեղջկու-
նեքին Չ. Վարդանյան
3. Ի՞նչ ասաց ընկ. Լենինը Լ.
4. Պատգամավորական ժողովները յեվ պատգամա-
վորունեքի վերընտրությունը Ն.

ՀՀ Ազգային գրադարան



NL0238313

56.255

396(47)

W-65